Սոնա Սոսի Հովհաննիսյան

Ծնվել է 1978 թվականի մարտի 31-ին Լենինական քաղաքում:

1985-95 թվականներին սովորել և ավարտել է Գյումրու թիվ 20 միջնակարգ դպրոցը:

1995-1999 թվականներին սովորել և ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետը, ստացել անգլերեն լեզվի մանկավարժի մասնագիտություն:

2000 թվականից մինչ օրս աշխատում է Գյումրու Վ. Թեքեյանի անվան թիվ 2 դպրոցում որպես անգլերեն լեզվի ուսուցչուհի:

2001-2004 թվականներին աշխատել է ՀՀ Շիրակի մարզպետարանի մշակույթի բաժնում որպես առաջատար մասնագետ:

2009 թվականից մինչև օրս հանդիսանում է Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախմբի տնօրենը:

2021 թվականի հոկտեմբեր ամսին ընտրվել է Գյումրու համայնքի ավագանու անդամ:

Տիրապետում է երկու օտար լեզուների՝ ռուսերեն, անգլերեն:

Պարգևատրվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության շնորհակալագրով:

Ամուսնացած է ունի մեկ զավակ: